ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Միջազգային համագործակցության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով, Նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարը (այսուհետ՝ Նախարար)՝ Նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

4. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են Վարչության պետը և Վարչության բաժինները:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

5. Հայաստանի Հանրապետության առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման բնագավառում Վարչության նպատակներն են՝

1) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև երկկողմ և բազմակողմ առևտրատնտեսական համագործակցության ընդլանումը, ինչպես նաև գործընկեր պետությունների և միջազգային կազմակերպությունների և կառույցների հետ նոր հարաբերությունների ձևավորումը,

2) հայրենական արտադրանքի արտահանման ծավալների ավելացումը, շուկաների դիվերսիֆիկացումը:

6. Հայաստանի Հանրապետության առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման բնագավառում Վարչության խնդիրներն են՝

1) արդյունավետ միջազգային տնտեսական կապերի հաստատումը, զարգացումն ու ընդլայնումը,

2) իր իրավասության սահմաններում միջազգային տնտեսական համագործակցության համար համապատասխան իրավապայմանագրային դաշտի ստեղծումը և զարգացումը,

3) արտահանման խթանումը և երկկողմ ու բազմակողմ տնտեսական կապերի զարգացումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր առջև դրված խնդիրների և նպատակների իրականացման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ տնտեսական համագործակցության աշխատանքների համակարգումը և իրականացումը,

2) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների հետ Նախարարության պաշտոնական կապի իրականացումը,

3) Նախարարության կողմից համակարգվող առևտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովների ու երկկողմ և բազմակողմ աշխատանքային խմբերի նիստերի նախապատրաստումը և կազմակերպումը, դրանց արդյունքում ընդունված որոշումների կատարման մշտադիտանցումը,

4) Նախարարության ստորաբաժանումների կողմից՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի, փոխվարչապետների, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմինների կողմից համակարգվող առևտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովների և երկկողմ ու բազմակողմ աշխատանքային խմբերի նիստերի արդյունքում ընդունված որոշումների կատարման մշտադիտանցումը,

5) Հայաստանի Հանրապետության առևտրական կցորդների և առևտրական ներկայացուցիչների գործունեության համակարգումը,

6) Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ, Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի աշխատակազմ, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ու Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն՝ ըստ առանձին երկրների տեղեկատվական փաթեթների՝ հավաքումը, ամփոփումը և ներկայացումը,

7) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ կնքվող երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի նախագծերի մշակումը, բանակցային գործընթացներին մասնակցությունը, տնտեսության տարբեր ոլորտներին վերաբերող միջազգային պայմանագրերի նախագծերի վերաբերյալ կարծիքների տրամադրումը,

8) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցելով, նախապատրաստում է Վարչության գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծեր,

9) Միացյալ Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ), ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ)/UNDP, ՄԱԿ-ի առևտրային, տնտեսական և գյուղատնտեսական կառույցների ու մարմինների (UNECE, UNCITRAL, UNCTAD, UNESCAP, UNIDO, FAO, IFAD, World Food Program, Codex Alimentarius և այլն), ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ԱՄՆ ՄԶԿ/USAID, Գերմանիայի միջազգային համագործակցության ԳՄՀ/GIZ, Ֆրանսիական Զարգացման Գործակալության ՖԶԳ/ADF, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ՇՄՀԳ/SDC/, Ճապոնիայի միջազգային համագործակցության գրասենյակի ՃՄՀԳ/JICA, Ճապոնիայի արտաքին առևտրի կազմակերպության ՃԱԱԿ/JETRO, Ավստրիական Զարգացման Գործակալության ԱԶԳ/ADA, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության ՏՀԶԿ/OECD, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության ՍԾՀԿ/BSEC, Համաշխարհային Բանկի/WB և դրա կառույցների Արժույթի միջազգային հիմնադրամ ԱՄՀ/IMF, Ասիական Զարգացման Բանկ ԱԶԲ/ADB, Եվրասիական Զարգացման Բանկ ԵԱԶԲ, Գերմանիայի վերականգնման վարկերի բանկ ԳՎՎԲ/ KfW,

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ՎԶԵԲ/EBRD և այլ կազմակերպությունների հետ համագործակցության աշխատանքների իրականացումը,

10) արտահանման զարգացման քաղաքականության մշակումը և իրականացումը,

11) արտահանման խթանման իրավական ակտերի մշակումը, հաշվի առնելով ոլորտային առանձնահատկությունները, արտահանման խոչընդոտների վերհանումը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը,

12) արտահանման խթանման ծրագրերի մշակումը և իրականացումը,

13) արտաքին շուկաների ուսումնասիրումը,

14) հայրենական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության, ինչպես նաև արտահանման խթանման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

15) իր իրավասության սահմաններում՝ արտաքին շուկաներում հայրենական արտադրանքի և ծառայությունների մրցունակության բարձրացման աջակցությունը,

16) արտահանման աջակցման քաղաքականության օրենսդրական նախաձեռնությունների ներկայացումը,

17) բեռնափոխադրումների և այլ լոգիստիկ միջոցների բարելավմանն ուղղված առաջարկների մշակումը և այլն,

18) գործարար համաժողովների, ցուցահանդեսների և տոնավաճառների ներուժի օգտագործումը՝ պետական և գործարար հատվածի մասնակցության, գործարար կապերի ձևավորման աջակցումը,

19) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների (ներկայացուցչությունների) հետ համատեղ նախապատրաստվող այցերի ծրագրերի մշակմանը մասնակցությունը

20) արտասահմանյան բարձրաստիճան պաշտոնյաների հետ Նախարարության ղեկավար կազմի (Նախարար, Նախարարի տեղակալներ) հանդիպումների նախապատրաստումը, այդ հանդիպումների արարողակարգային ապահովման իրականացումը,

21) Նախարարության ղեկավար կազմի (Նախարար, Նախարարի տեղակալներ) արտասահմանյան գործուղումների նախապատրաստումը և կազմակերպումը,

22) Նախարարի, Նախարարի տեղակալների գլխավորած պատվիրակու-թյունների, Նախարարության աշխատակիցների օտարերկրյա պետություններ այցերի նախապատրաստումը, ինչպես նաև Նախարարության ղեկավար կազմի (Նախարար, Նախարարի տեղակալներ) արտասահմանյան գործուղումների կազմակերպումը,

23) միջազգային բնույթի միջոցառումներին Նախարարության ներկայացուցիչների մասնակցության կազմակերպումը,

24) արտասահմանյան պատվիրակությունների և միջազգային կառույցների ներկայացուցիչների հանդիպումների կազմակերպումը և իրականացումը Նախարարության ղեկավար կազմի (Նախարար, Նախարարի տեղակալներ) հետ, այդ հանդիպումների արարողակարգի ապահովումը,

25) օտարերկրյա պաշտոնական պատվիրակությունների ընդունելությունների կազմակերպումը:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից.

1) Երկկողմ և բազմակողմ համագործակցության բաժին,

2) **Արտահանման խթանման բաժին**:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Երկկողմ և բազմակողմ համագործակցության բաժնի հիմնական գործառույթներն են՝

1) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ տնտեսական համագործակցության աշխատանքների համակարգումը և իրականացումը,

2) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների հետ Նախարարության պաշտոնական կապի իրականացումը,

3) Նախարարության կողմից համակարգվող առևտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովների ու երկկողմ և

բազմակողմ աշխատանքային խմբերի նիստերի նախապատրաստումը և կազմակերպումը, դրանց արդյունքում ընդունված որոշումների կատարման մշտադիտանցումը,

4) Նախարարության ստորաբաժանումների կողմից՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի, փոխվարչապետների, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմինների կողմից համակարգվող առևտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովների և երկկողմ ու բազմակողմ աշխատանքային խմբերի նիստերի արդյունքում ընդունված որոշումների կատարման մշտադիտանցումը,

5) Հայաստանի Հանրապետության առևտրական կցորդների և առևտրական ներկայացուցիչների գործունեության համակարգումը,

6) Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ, Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի աշխատակազմ, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ու Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն՝ ըստ առանձին երկրների տեղեկատվական փաթեթների՝ հավաքումը, ամփոփումը և ներկայացումը,

7) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ կնքվող երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի նախագծերի մշակումը, բանակցային գործընթացներին մասնակցությունը, տնտեսության տարբեր ոլորտներին վերաբերող միջազգային պայմանագրերի նախագծերի վերաբերյալ կարծիքների տրամադրումը,

8) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցելով, նախապատրաստում է Վարչության գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծեր,

9) Միացյալ Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ), ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ)/UNDP, ՄԱԿ-ի առևտրային, տնտեսական և գյուղատնտեսական կառույցների ու մարմինների (UNECE, UNCITRAL, UNCTAD, UNESCAP, UNIDO, FAO, IFAD, World Food Program, Codex Alimentarius և այլն), ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության

ԱՄՆ ՄԶԿ/USAID, Գերմանիայի միջազգային համագործակցության ԳՄՀ/GIZ, Ֆրանսիական Զարգացման Գործակալության ՖԶԳ/ADF, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ՇՄՀԳ/SDC/, Ճապոնիայի միջազգային համագործակցության գրասենյակի ՃՄՀԳ/JICA, Ճապոնիայի արտաքին առևտրի կազմակերպության ՃԱԱԿ/JETRO, Ավստրիական Զարգացման Գործակալության ԱԶԳ/ADA, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության ՏՀԶԿ/OECD, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության ՍԾՀԿ/BSEC, Համաշխարհային Բանկի/WB և դրա կառույցների Արժույթի միջազգային հիմնադրամ ԱՄՀ/IMF, Ասիական Զարգացման Բանկ ԱԶԲ/ADB, Եվրասիական Զարգացման Բանկ ԵԱԶԲ, Գերմանիայի վերականգնման վարկերի բանկ ԳՎՎԲ/ KfW, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ՎԶԵԲ/EBRD և այլ կազմակերպությունների հետ համագործակցության աշխատանքների իրականացումը,

10) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների (ներկայացուցչությունների) հետ համատեղ նախապատրաստվող այցերի ծրագրերի մշակմանը մասնակցությունը,

11) արտասահմանյան բարձրաստիճան պաշտոնյաների հետ Նախարարության ղեկավար կազմի (Նախարար, Նախարարի տեղակալներ) հանդիպումների նախապատրաստումը, այդ հանդիպումների արարողակարգային ապահովման իրականացումը,

12) Նախարարության ղեկավար կազմի (Նախարար, Նախարարի տեղակալներ) արտասահմանյան գործուղումների նախապատրաստումը և կազմակերպումը,

13) Նախարարի, Նախարարի տեղակալների գլխավորած պատվիրակու-թյունների, Նախարարության աշխատակիցների օտարերկրյա պետություններ այցերի նախապատրաստումը, ինչպես նաև Նախարարության ղեկավար կազմի (Նախարար, Նախարարի տեղակալներ) արտասահմանյան գործուղումների կազմակերպումը,

14) միջազգային բնույթի միջոցառումներին Նախարարության ներկայացուցիչների մասնակցության կազմակերպումը,

15) արտասահմանյան պատվիրակությունների և միջազգային կառույցների ներկայացուցիչների հանդիպումների կազմակերպումը և իրականացումը

Նախարարության ղեկավար կազմի (Նախարար, Նախարարի տեղակալներ) հետ, այդ հանդիպումների արարողակարգի ապահովումը,

16) օտարերկրյա պաշտոնական պատվիրակությունների ընդունելությունների կազմակերպումը:

10. Արտահանման խթանման բաժնի հիմնական գործառույթներն են՝

1) արտահանման զարգացման քաղաքականության մշակումը և իրականացումը,

2) արտահանման խթանման իրավական ակտերի մշակումը, հաշվի առնելով ոլորտային առանձնահատկությունները, արտահանման խոչընդոտների վերհանումը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը,

3) արտահանման խթանման ծրագրերի մշակումը և իրականացումը,

4) արտաքին շուկաների ուսումնասիրումը,

5) հայրենական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության, ինչպես նաև արտահանման խթանման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

6) իր իրավասության սահմաններում՝ արտաքին շուկաներում հայրենական արտադրանքի և ծառայությունների մրցունակության բարձրացման աջակցությունը,

7) արտահանման աջակցման քաղաքականության օրենսդրական նախաձեռնությունների ներկայացումը,

8) բեռնափոխադրումների և այլ լոգիստիկ միջոցների բարելավմանն ուղղված առաջարկների մշակումը և այլն,

9) գործարար համաժողովների, ցուցահանդեսների և տոնավաճառների ներուժի օգտագործումը՝ պետական և գործարար հատվածի մասնակցության, գործարար կապերի ձևավորման աջակցումը,

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

11. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Վարչության պետը:

12. Վարչության պետը՝ անմիջական ենթակա և հաշվետու է Նախարարին:

13. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության բաժինների պետերից մեկը՝ Վարչության պետի ներկայացմամբ:

14. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում նրան փոխարինողի կողմից:

15. Վարչության բաժինների պետերը անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության պետին:

16. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

17. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: